



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

2(075)  
U-44

280

meinen Platz  
auf Antrag zu bewilligen  
in Jena.

9  
3

10  
5

2010

2(045)  
44  
ԿՐՈՆԻ ԴԱՍԱԳԻՐՔ

ԵՐՐՈՐԴ ՏԱՐՈՒԹՅ ՈՒՍՈՒՄՆ

ՀԱՅՈՅ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ-ԾԽԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆՆԵՐԻ  
ՀԱՄԱՐ

ՊԱՏԿԵՐԱՁԱՐՔ

(Համաձայն Ամենայն Հայոց Վեհափոխ Կաթոլիկոսին  
հաստատուած ծրագրի)

(30/6  
ՀԱՅՈՐ  
35.5)



ԸՆԴՀԱՆՈՒՐԵՑ

ԳԻՒՏ ՔԱՀԱՆԱՑ ԱՂԱՆԵԱՑ



ՏՓԽԻԱ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏԵՇԱՀԱՅՆ ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆՑԻ ՏՊԱՐԱՆ  
ՀՈԽՀ-ՀՀՀԱ  
ՕՐԵԼԵԵՑՆ ՓՈՂՈՑ, Տ. 1/2  
ՀՈԽՀ-ՀՀՀԱ  
Տ. 4. Ա. Առաքելական  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀՆԱԿԱՆ

1887

Дозволено цензурою. 31 Июня 1887 г. Тифлисъ.

108029-42

Типографія И. Мартиросіанда, на Орб. ул., д. № 1/2.

Հ ՐԱՄԱՆԱԿ

S S. ՄԱԿԱՐԱՅ Ա.

ՎԵՀԱՓՈՐ ԵՒ ՍՐԲԱԳՆԱԳՈՅՆ ԿԱԹՈՒՂԻԿՈՍԻ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՅ

# Ց Ա Ն Կ

## ՄԱՍՆ Ա.

Ա Դ Օ Թ Ք Ն Ե Ր

- ա. Քեզ Երկիրպագանելով.
- բ. Հայր գթած.
- դ. Հըեշտակի խաղաղութեան.
- դ. Ընկալ Տէր զաղաչանս մեր.
- ե. Փառք ՚ի բարձունս Աստուծոյ.
- դ. Հաւատամք:

## ՄԱՍՆ Բ.

Տ Օ Ն Ե Ր.

- է. Քրիստոսի պայծառակերպութիւնը:
- լ. Վերափոխումն ս. Աստուածածնի.
- թ. Ա. Թաղէոս և Բարդուղիմէոս.
- ժ. Ա. Գրիգոր Լուսաւորիչ.
- ժա. Հռիփսիմեան և Գայիանեան Սուրբ Կոյսեր.
- ժը. Տօն սրբոյ Եջմիածնի.
- ժդ. Տօն Վարագայ սրբոյ Խաչի.
- ժդ. Երևումն սուրբ Խաչի.
- ժե. Մեծն Ներսէս.
- ժդ. Ա. Սահակ և Մեսրովալ թարգմանիչներ.
- ժէ. Ա. Ասովմեանք.
- ժը. Ա. Վարդանանք:

## ՄԱՍՆ Ա.

Ա Գ Ո Թ Ք Ն Ե Ր

Ա.

Քեզ Երկիրապագանելով Տէր Կստուած  
մեր՝ գոհանամբ զքէն յաղազս խաղաղու-  
թեամբ անցուցանելոյ ՚ի մէնջ զերկարու-  
թին տունջեանս: Տուր մեզ, Տէր, աղա-  
չեմք զքեզ՝ զերեկս և զառաջեկայ գիշերս  
առանց մեղաց, և առանց գայթակղութեան  
անցուցանել. Հաստատուն կալ և մնալ ՚ի  
Հաւատ՝ ՚ի Յօյս՝ ՚ի ՈՒր՝ և ՚ի պատուիրա-  
նապահութեան քոյ:

Խնդրելով զիսաղաղութիւն ամենայն աշ-  
խարհի, և Եկեղեցւոյ քում սրբոյ զհաստա-  
տութիւնն, և անձանց մերոց զփրկութիւնն:  
Որպէս զի ընդունելով ՚ի քէն զհայցուածս  
մեր՝ և զմեծ վայելչական փառաբանութիւն

միշտ՝ ի բարձունս առաքեսցուք ամենազօր տէրութեանդ. Քրիստոս Աստուած մեր. այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Բ.

Հայր գլուխ, բարեխնամող, արարիչ ամենայն արարածոց, ընկալ զպաղատանս ծառայից քոց՝ ի ժամ երեկոյիս. որ առատդ ես առ ամենեսեան պարգևոք բարերարութեան քո: Ողորմեա, Տէր, ամենայն աշխարհի, և Եկեղեցւոյ քում սրբոյ. հիւանդաց, վշտացելոց, ճանապարհորդաց, նաւորդաց, խոստովանողաց, ապաշխարողաց և հոգւոցն հանդուցելոց: Օ, ի դու, Տէր ամենակալ, գիտես զպէտս մեր և զկարիս՝ առաւել քան զոր խնդրեմք և իմանամք և քեզ ընդ Որդւոյ և Ամենասրբոյ Հոգւոյդ, վայել է փառք, իշխանութիւն և պատիւ. այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Գ.

Հրեշտակի խաղաղութեան յանձն արա

զանձինս մեր, Տէր զօրութեանց, որ եկեալ պահեսցէ զմեզ անխռովս՝ ի տուէ և ՚ի գիշերի, յարթնութեան և ՚ի չանդուտեան մերում. զի դու ես արարիչ լուսոյ և հաստիչ գիշերի: Եւ այժմ աղաչեմք զքեզ, Տէր Աստուած մեր, զչանգիստ գիշերիս չնորհեա խաղաղութեամք անցուցանել, և հասանիլ ՚ի պաշտօն առաւոտու՝ յերկրպագութիւն և ՚ի փառաբանութիւն Ամենասուրբ երրորդութեանդ, այժմ և միշտ և յաւիտեանս:

Դ.

Ընկալ, Տէր, զաղաչանս մեր՝ բարեխօսութեամք սուրբ Աստուածածնին անարատ ծնողի միածնի Որդւոյ քո. և աղաչանօք ամենայն սրբոց քոց. և որոց այսօր է յիշատակ:

Լուր մեզ, Տէր, և ողորմեա, ներեա, քաւեա և թող զմեզս մեր: Արժանաւորեա գոհութեամք փառաւորել զքեզ ընդ Որդւոյ և ընդ սրբոյ Հոգւոյդ. այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Ե.

Փառք՝ ի բարձունս Կատուծոյ. և յերկիր խաղաղութիւն՝ ի մարդիկ հաճութիւն։ Եւ օրհնութիւն քեզ՝ ի բարձունս, օրհնեալ ես Տէր Կատուած մեր. օրհնեմք զքեզ և գովեմք զքեզ։ Խոստովանիմք Տէր զքեզ և երկիրապահնեմք ըեզ. փառաւորեմք զքեզ. զոհանամք Տէր զքէն վասն մեծի փառաց քոց։ Տէր թագաւոր սուրբդ երկնային, Կատուած և Հայր ամենակալ։ Տէր և Որդի Հօր միածին Յիսուս Քրիստոս և սուրբ Որդի։ Տէր Կատուած Գառն Կատուծոյ և Որդի Հօր. որ առեր զմերս՝ ի կուսէն։ Ողորմեցար, բարձեր զմելս աշխարհի. և արդընկալ զաղաշսնս մեր։ Սուրբդ որ նպաիս ընդ աջմէ Հօր՝ ողորմեաց մեզ։ Զի դու միայն սուրբ, դու միայն բարձրեալ ես, դու միայն Տէր մեր Յիսուս Քրիստոս։ Տէր և Հոգիդ Սուրբ՝ որ՝ ի փառս Կատուած ընդ Հօր. ամէն։

Եւ յամենայն ժամ օրհնեմք զքեզ, Տէր և գովեմք զԿատուն սուրբ քո յաւիտեան և

յաւիտեանս յաւիտենից։ Արժանի արա, Տէր, զօրս զայս խաղաղութեամբ, և առանց մեղաց պահեա զմեզ։ Օրհնեալ ես Տէր Կատուած հարցն մերոց. գովեալ և փառաւորեալ է Կատուն սուրբ քո յաւիտեանս. ամէն։ Օրհնեալ Տէր, ուսո՞ ինձ զարդարութիւնս քո. (Երեք անգամ կրկնիր)։ Տէր, ապաւէն եղեր մեր յազգէ յազգ։ Ես աղաչեմ Տէր, ողորմեա ինձ և բժշկեա զանձն իմ. ես մեղայ քեզ։ Յոյց մեզ Տէր զողորմութիւնս քո, և զիրկութիւնս քո Տուր մեզ։ Տէր ողորմութիւն քո յաւիտեան. զգործս ձեռաց քոց մի՛ անտես առներ։ Տէր իմ զքեզ ապաւէն ինձ արարի. ուսո՞ ինձ առնել զկամս քո՝ զի դու ես Կատուած իմ։ 'Ի քէն է, Տէր, աղքիւր կենդանութեան. և լուսով երեսոց քոց տեսանեմք զլոյս։ Դագեա զողորմութիւնս քո՝ որբ ձանաչեն զքեզ, Տէր։

Փառք, պատիւ և երկրապագութիւն՝ ի բարձունս Հօր և Որդւոյ և Հոգւոյն Արբոյ. այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն։

Զ.

Հաւատամք՝ ի մի Աստուած, ՚ի Հայրն  
ամենակալ յարարիչն երկնի և երկրի,  
երևելեաց և աներևութից:

Եւ ՚ի մի Տէր Յիսուս Քրիստոս, Ուր-  
դին Աստուծոյ, ծնեալն յԱստուծոյ Հօրէ  
միածին, այսինքն յէռութենէ Հօր: Աստուած  
յԱստուծոյ, լոյս ՚ի լուսոյ, Աստուած ճըշ-  
մարիտ յԱստուծոյ Ճշմարտէ՛ ծնունդ և ոչ  
արարած: ՚Նոյն ինքն ՚ի բնութենէ Հօր,  
որով ամենայն ինչ եղեւ յերկինս և ՚ի վե-  
րայ երկրի երևելիք և աներևոյթք:

Որ յաղագս մեր մարդկան և վասն մե-  
րոյ փրկութեան իջեալ յերկնից՝ մարմնա-  
ցաւ, մարդացաւ, ծնաւ կատարելապէս ՚ի  
Մարիամայ սրբոյ կուսէն Հոգւովն սրբով:  
Որով էառ զմարմին, զհոգի և զմիտ, և զա-  
մենայն որ ինչ է ՚ի մարդ, Ճշմարտապէս  
և ոչ կարծեօք:

Չարչարեալ խաչեալ թաղեալ, յեր-  
բորդ աւոր յարուցեալ, ելեալ ՚ի յերկինս

նովին մարմնովն նստաւ ընդ աջմէ Հօր:

Դալոց է նովին մարմնովն և փառօք  
Հօր ՚ի դատել զկենդանիս և զմեռեալս,  
որոյ թագաւորութեանն ոչ գոյ վախճան:

Հաւատամք և ՚ի սուրբ Հոգին յանե-  
զըն և ՚ի կատարեալն, որ խօսեցաւ յօրէնս  
և ՚ի մարգարէս և յԱւետարանս: Որ էջն  
՚ի Յորդանան, քարոզեաց զԱռաքեալն, և  
ընակեցաւ ՚ի սուրբսն:

Հաւատամք և ՚ի միմիայն ընդհանրա-  
կան և առաքելական եկեղեցի. ՚ի մի մկրտ-  
ութիւն, յապաշխարութիւն, ՚ի քաւու-  
թիւն և ՚ի թողութիւն մեղաց: ՚Ի յարու-  
թիւն մեռելոց, ՚ի դատաստանն յափտենից՝  
հոգւոց և մարմնոց, յարքայութիւնն երկնից  
և ՚ի կեանսն յաւփտենականս:

Իսկ որք ասեն, էր երբեմն՝ յորժամ ոչ  
էր Որդի, կամ էր երբեմն՝ յորժամ ոչ էր  
սուրբ Հոգի, կամ թէ յոչէից եղեն, կամ  
յայլմէ էութենէ ասեն լինիլ զՈրդին Կո-  
տուծոյ և կամ զՈւրբ Հոգին. և թէ փոփո-  
խելիք են կամ այլայլիք, զայնպիսիսն նզովէ  
կաթուղիկէ և առաքելական սուրբ Եշեղեցի:

Իսկ մեք փառաւորեսցուք որ յառաջ  
քան զյաւիտեանս. երկիրպագանելով Արբոյ  
Երրորդութեան և միոյ աստուածութեանն  
Հօք և Որդւոյ և Հոգւոյն Արբոյ. այժմ և  
միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Այս-Օճախութեան

ՄԱՍՆ Բ.



Ե.


ԳՐԻՍՏՈՍԻ ՊԱՅԹԱՌԱԿԵՐՊՈՒԹԻՒՆԸ  
ՎԱՐԴԱՎԱՐԻ:

(Մատթ. ՃԷ. 1—8):

Մի անգամ Յիսուս իւր Պետրոս, Յակովոս և Յով-  
հաննէս առաքեալներին տարաւ Թափօր լեառը և Ինքը  
սկսաւ աղօթք անել այնտեղ. աղօթելու ժամանակ Յի-  
սուսի երեսը փայլեցաւ արեգակի պէս և շորերը սպիտա-  
կացան ինչպէս ձիւն: Եւ երկու մարդ սկսան խօսել Յի-  
սուսի հետ. դոքա Մովսէս և Եղիա մարդարէներն էին:

Աշակերտները երբ Աստուածային այդ փառքը տե-  
սան՝ հիացան և Պետրոսն ասաց Յիսուսին. «Տէր, լաւ կը  
լինի որ այստեղ մնանք, երեք վրան (տաղաւար) շինենք,  
մէկը Քեզ, մէկը Մովսէսի և մէկն էլ Եղիայի համար».  
Նա չը գիտէր, թէ ինչ էր խօսում, որովհետեւ վախե-  
ցած էին:

Այդ միջոցին մի լուսաւոր ամպ իջաւ և ծածկեց նոցա: Երկնքից ձայն եկաւ թէ «Քա է իմ սիրելի Որդին, Որին հաւանեցի, Դորան լսեցէք»: Աշակերտները ահեց



թափուեցան գետին: Իոկ Յիսուս մօտենալով նոցա՝ քաջալերեց և ոտքի կանգնեցրեց. Երբ նոքա վերկացան՝ Յիսուսին իւր առաջուայ կերպարանքովը տեսան:

Վարդապարի տօնը Հայերը քրիստոնէութիւնից առաջ

կատարում էին Նաւասարդ ամսի սկզբում, չոռվմայեցւոց Օգոստոսի 11-ին, որ է մեր տարեգլուխը կամ Նոր տարին, և ամեն տարեղարձին, որպէս Նոյի ջրհեղեղից ազատուելու լիշտակ տօն էին կատարում աղօթք մատուցանելով ճշմարիտ Աստծուն և Առուածպաշտութեան տեղը գարդարում էին վարդերով, որից այդ տօնը ստացաւ Վարդավառ անունը. այդ տօնին միմեանց վերայ ջուր էին ցանում իբրև լիշտակ ջրհեղեղի և թուցնում էին աղաւնիներ, Նոյի աղաւնի թուցնելուն լիշտակ:

Երբ Հայաստանում կռապաշտութիւնը տարածուեցաւ, Նաւասարդի տօնի հանդէսը մատուցանում էին Աստղիկ և Անահիտ կուռքերին և Վահեվանեան մեհեանին, որ գտնվում էր Արտաշատում և Տարօն գաւառում: Յետոյ Երբ Սուրբ Գրիգոր Լուսաւորիչը՝ այդ հեթանոսական տօնի փոխանակ կարգեց Քրիստոսի պայծառակերպութեան տօնը, ջուր ցանելու, աղաւնի թուցնելու և վարդ փռելու սովորութիւնը մնաց մինչև այսօր:

Քրիստոսի պայծառակերպութեան տօնին եկեղեցում ասւում է այս ժամամուտը.

**Երևի Տէրդ այսօր աշակերտացդ՝** ի Թափօրական լերինն, և աշոկերտացը զարհուրեալք աշաղակէին ասելով. արասցուք երիս տաղաւարս՝ մի Տեառնդ, և մի Մովսիսի և մի Եղիայի: Արդ՝ և մեք բանաւոր հօտքս երգեմք ընդ քո Ճշմարիտ վկայիցդ, առաջ

Քեա առ մեզ զլոյս քո շնորհացո՞ւ  
քո միւսանգամ գալստեանդ և կեցո՞ւ:

Է.

ՎԵՐԱՓՈԽՈՒԹԻՄՆ Ս. ԱՍՏՈՒԾԱՆԺՆԻ.

Յիսուս Քրիստոս երբ Խաչի վերայ էր՝ իօր մօրը յանձնեց իւր սիրելի աշակերտ Յովհաննէս աւետարանչին, որի մօտ սուրբ կոյս Մարիամը կացաւ մօտ տասն և չորս տարի և երբ տեսաւ, որ իւր մահը մօտեցել է՝ առաքեալներին և հաւատացեալներին օրհնեց և աւանդեց հոգին: Առաքեալները վերցրին Աստուածամօր մարմինը և մեծ հանդիսով տարան թաղեցին Գեթսեմանի գիւղումը:

Բարդուղիմէոս առաքեալը ներկայ չէր թաղմանը. երբ եկաւ՝ տեսաւ որ Ս. Կոյսը այլ ևս կենդանի չէ, խիստ փափագեցաւ տեսնել նորա մարմինը. այդ պատճառով առաքեալների հետ գնաց Գեթսեմանի և երբ բացին տապանը ո. Կուսի մարմինը չը գտան նորա մէջ և հաւատացին, որ ս. մարմինը հրեշտակների օրհներգութեամբ համբարձել—վերափոխուել էր երկինքը իւր Միածին Որդու մօտ:

Բարդուղիմէոսը սաստիկ տիսրեցաւ, որ ս. Կուսին ոչ կենդանի կարողացաւ տեսնել, և ոչ գոնէ նորա սուրբ մարմինը տեսաւ տապանի մէջ. առաքեալները տեսնելով նորա այս տիսրութիւնը՝ ընծայեցին նորան ս. Կուսի պատկերը, որ Յովհաննէս Աւետարանիչը նկարել էր կիպարիս փայտի վերայ և սուրբ Աստուածածինը իւր սուրբ երեսի վերայ դնելով՝ ինդիրել էր Աստծոց նորանով բժշկութեան

շնորհ այս միջոցին խիստ տարածուած բորստութեան ցաւին:



Բարդուղիմէոս չափագանց ուրախանալով առաւ ս. պատկերը, շտապեց չայստան և Ցիգըիս գետի ափին կանգուար բերդի մօտ մի տաճար շինեց սուրբ Աստուածածինի անունով, ուր պահեց տիբրամօր պատկերը. այսուեղ հաւաքեց կոյսեր, որոնց վերայ մայրապետ կարգեց Մարիամ անունով մէկին, իւր աշակերտներից մէկին էլ նոցա համար քահանայ ձեռնադրեց և այդ տեղը անուանեց Հոգեաց վանք:

Ս. Աստուածածինի վերափոխման տօնը Հայոց եկեղեցին կատարում է ամառը, Օգոստոս ամսին. այդ օրը եկեղեցում ս. Պատարագից լետոյ խաղող են օրհնում:

թ.

Ս. ԹԱՐԻԾՈՒ ԵՒ ԲԱՐԴՈՒՂԻՄՔՈՍ.

1. Հայոց Աբգար թագաւորը լսեց, թէ Երուսաղէմի մէջ քարոզում է մեր Տէր Յիսուս Քրիստոսը և բժշկում է բորոտներ, կաղեր, կոյրեր և ամեն տեսակ հիւանդներ: Եւ որովհետև ինքն էլ հիւանդ էր՝ դեսպանների ձեռքով մի նամակ ուղարկեց Փրկչին, որի մէջ գրում էր, թէ՝ լրսել եմ որ Դու առանց դեղի բժշկում ես տեսակ տեսակ հիւանդներ և յարութիւն ես տալիս մեռելներին. ուրեմն կամ Աստուած ես Դու և կամ Աստուծոյ Որդի. ուստի խնդրում եմ գաս ինձ մօտ և բժշկես իմ հիւանդութիւնը. այլ և լսել եմ, թէ Հրէաները ուղում են քեզ չարչարել. ես մի փոքրիկ քաղաք ունիմ, որ երկրուսիս էլ բաւական է:

Աբգարը դեսպանների հետ դրեց և մի նկարիչ և պատուիրեց նորան, որ եթէ Յիսուս ըլ համաձայնի գալ՝ նկարէ նորա պատկերը և բերէ:

Դիսպանները հասան Երուսաղէմ այն օրը, երբ Յիսուս փառքով Երուսաղէմ էր մտնում. նոքա առաքեալների ձեռքով Աբգարի նամակը տուին Փրկչին: Յիսուս յանձնեց Թովմաս առաքեալին պատասխան գրել Աբգարին, որ ինքը Իւր համբարձումից յետոյ կուղարկի Իւր աշակերտներից մէկին, որ կը բժշկէ Աբգարի հիւանդութիւնը:

Երբ Աբգարի ուղարկած նկարիչը տեսաւ, որ Յիսուս ըլ համաձայնեցաւ դնալ, սկսեց նկարել Փրկչի պատկերը, բայց ըլ կարողացաւ. Յիսուս կանչեց նորան Իւր մօտ,

պահանջեց մի մաքուր կտաւ և գնելով Իւր գէմքի վերայ՝ դրոշմեց նորա վերայ Իւր Աստուածալին պատկերը և դեսպանների ձեռքով ուղարկեց Աբգարին: Այս պատկերը կոչվում է Դաստառակ Փրկչստոսի:



Քրիստոսի համբարձումից յետոյ Հայաստան եկաւ Թադէոս առաքեալը, որ Նորա եօթանասուն և երկու աշակերտներից մէկն էր, բերելով իւր հետ Փրկչի կողամուխ Գեղարդը, որ այժմ գտնվում է սուրբ Էջմիածնայ տաճարում: Նա գալով Եղեսիա քաղաքը՝ բժշկեց Աբգար թագաւորին, մկրտեց նորան, նորա բոլոր տունը և Եղեսիայի բնակիչներին, քանդեց բոլոր կռատունները և ամեն տեղ կանգնեցրեց Քրիստոսի սուրբ Խաչը. Եկեղեցիներ շինեց, քահանաներ կարգեց և իւր տեղ ձեռնադրելով

թագաւորի խոյր շինող Ադքէին եպիսկոպոս՝ գնաց Հայաստանի ուրիշ կողմերը աւետարանը քարոզելու։ Աբգարի հրամանով գնաց նորա քրոջ որդի Սանատրուկ իշխանի մօտ, քարոզեց այստեղ և Սանատրուկին իւր Սանդուխտ աղջկայ հետ գարձեց քրիստոնեալ. այստեղից էլ գնաց Հայաստանի ուրիշ կողմերը և քարոզում էր. բայց վերջը Սանատրուկը ուրանալով քրիստոնէութիւնը՝ նահատակեց Թագէոս առաքեալին և նորա հետ իւր աղջիկ Սանդուխտ կոյսին։

2. Թագէոս առաքեալից յետոյ Քրիստոսից 65 տարի յետոյ Հայաստան եկաւ Բարդուղիմէոս առաքեալը, որ իւր հետ բերելով ս. կոյս Մարիամի պատկերը՝ Տիգրիս գետի ափին մի փոքրիկ եկեղեցի շինեց սուրբ Աստուածածին անունով և այն պատկերը դրաւ նորա մէջ. նա Հայաստանում քարոզեց, շատերին քրիստոնեալ դարձրեց և երկու տարի շարունակ Հայաստանում քարոզելուց յետոյ նահատակուեցաւ Սանատրուկից։

Ա. Թագէոս և Բարդուղիմէոս առաքեալները կոչվում են Հայաստանի առաջին Լուսաւորիչներ, որովհետև Հայաստանում առաջին անգամ նոքա տարածեցին քրիստոնէութիւնը. իսկ Հայոց եկեղեցին կոչվում է առաջին քրիստոնէական եկեղեցի. որովհետև ամեն ազգերից առաջ ընդունեց քրիստոնէութիւնը և ունի շարունակ առաքելական յաջորդութիւն սկսած ս. Թագէոս և Բարդուղիմէոսից։

Եթե եկեղեցին հանդիսաւոր կերպով տօնում է այդ երկու Լուսաւորիչների տօնը։

Ժ.

### Ա. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՑ.

Սուրբ Գրիգոր Լուսաւորիչը Անակ նախարարի որդին էր. նա ծնուեցաւ 257 թուին Վաղարշապատ քաղաքում։

Պարսից Արտաշիր թագաւորը մի քանի անգամ յաղթուած լինելով մեր Խոսրով թագաւորից՝ աշխատում էր միջոցներ գտնել ազատուելու նորանից. գտնուեցաւ Անակ անունով մէկ նախարար, որ յանձն առաւ խարդախ միջոցներով գլուխ բերելու Արտաշիր ցանկութիւնը. նա առնելով իւր ընտանիքը Պարսկաստանից ինչպէս փախստական եկաւ Հայաստան և ապակինեց Խոսրովի պաշտպանութեան։ Երեք տարի նա վայելում էր Խոսրովի սէրը. մի անգամ արքունի ոբսի ժամանակ յարմար համարելով սպանեց թագաւորին և փախչելիս խեղդուեցաւ Երասխ գետի մէջ. Խոսրովը վերջին շնչին պատուիրեց Անակի լրտանիքը ջնջել, որոնցից ազատուեցան երկու որդիք—Սուրէն և Գրիգոր. առաջինին վախցրին Պարսկաստան, իսկ վոքը որդուն նորա գայեակ Սօփիան տարաւ Կեսարիա, որ այժմ կոչվում է Պայտերի քաղաք և գտնվում է Տաճկաստանում. և որովհետև ինքը քրիստոնեալ էր, այստեղ մկրտեց նորան և անունը դրեց Գրիգոր։ Սա Կեսարիայում ստացաւ քրիստոնէական կրթութիւն. ամուսնացաւ Մարիամ անունով մի աղջկայ հետ և ունեցաւ երկու որդի՝ Վրդանէս և Արիստակէս։

Երեք տարուց յետոյ Մարիամը իւր փոքր որդու հետ մտաւ կուսանոց, իսկ Գրիգորը Վրդանէսին յանձնելով դա-

յեկին՝ ինքը գնաց չուզմ, որ Խոսրովի որդի Տրդատի մօտ ծառայութեամբ քաւէ իւր հօր մեղքը:

Մի քանի տարուց յետոյ Տրդատը իւր քաջութիւնների համար թագաւորական թագ ստանալով յետ դարձաւ Հայաստան հայրական աթոռը ժառանգելու: Շանապահին երբ հասան Եկեղեց դաւառի Երիզայ գիւղը՝ Տըրդատը շնորհակալութեան զոհ բերեց Անահիտ կուռքին և Գրիգորին էլ հրամայեց, որ ծաղկեայ պսակ դնէ նորա արձանին. իսկ Գրիգորը, որ մինչև այդ ժամանակ ծածուկ էր պահել իւր քրիստոնեալ լինելը այժմ յայտնելով՝ բացարձակ հրաժարուեցաւ թագաւորի հրամանը կատարելուց: Այդ պատճառով թագաւորը հրամայեց տասներկու տեսակ խիստ չարչարանքներ տալ նորան. և այդ բոլորը համբերութեամբ տարաւ Գրիգորը: Իսկ երբ իմացաւ Տըրդատը, թէ Գրիգորը իւր հօր սպանող Անակի որդին է՝ հրամայեց ձգել Արտաշատ քաղաքի գուբը (Խորվիրապ), ուր ձգում էին մահապարտներին: Այդ գուբի մէջ Գրիգորը մնաց մօտ 15 տարի, կերակրուելով մի պառաւ կնոջ ձեռքով ըստ աւանդութեան:

301 թուին չուզմից փախան Հայաստան Հռիփսիմեան կոյսերը, որոնց Տրդատը նահատակել տուեց, դորա համար իւր չարագործութեան պատիժը ստացաւ. իսկն սկսաւ տանջել նորան և ընկաւ թափառելու անմարդաբնակ տեղերը, ուր խոզերն էին ապրում:

Տրդատի քոյլ Խոսրովիդխտին քանիցո կրկնուած երազում յայտնուեցաւ, թէ Գրիգորը կենդանի է Խորվիրապի մէջ և թէ միայն նա կարող է բժշկել Տրդատին և ժողովրդին: Իսկոյն Օտար անունով նախարարին ուղարկեցին և զրից հանեցին ս. Գրիգորին, որ եկաւ Վաղարշապատ,

ս. Կոյսերի մարմինները թաղեց և իւր 65 օրուայ քարոզութեան ընթացքում հետզհետէ բժշկում էր Տրդատին և բոլոր ժողովրդին:



Յետոյ Տրդատը հաւաքելով բոլոր մեծամեծներին և ժողովրդեան՝ ընդհանուր խորհրդով ընտրեցին ս. Գրիգորին Հայաստանի հովիւ և ուղարկեցին Կեսարիա ս. Թադէոսի յաջորդ Վեռնդիոս պատրիարքի մօտ, որից ձեռնադրուեցաւ Հայրապետ ամենայն Հայոց, Փրկչի 302 թուին:

Վեոնդիսս պատրիարքը ընծայեց նորան Յովհաննէս Կարապետի և Աթանագինէ եպիսկոպոսի մասունքները. երբ ս. Գրիգորը հասաւ Մուշ քաղաքը՝ շինեց այստեղ մի եկեղեցի և Յովհաննէս Կարապետի մասունքի մի մասը զրեց այստեղ, որ ասուեցաւ Սուրբ Կարապետի վանք:

Ս. Գրիգորը Կեսարիակից յետ գտոնալիս ճանապարհին կուռքերի արձանները քանդեց, շատերին մկրտեց և քահանայիք ու եպիսկոպոս ձեռնադլելով յանձնեց նոյախնամքին հաւատացեալ ժողովուրդը: Երբ հասաւ Վաղարշակերտ քաղաքը՝ ընդառաջել էին թագաւորը, պալատականներով, զօրքերով և ժողովրդով, որոնց Եփրատ գետի մէջ մկրտեց փոխելով Տրդատի անունը Յովհաննէս: Իսկ երբ Վաղարշապատ հասաւ՝ Տրդատի օդնութեամբ շինեց ս. Խջմիածնայ տաճարը, Հոփիսիմեանց և Գալիանեանց մատունները, ձեռնադլեց քահանաներ և եպիսկոպոսներ, բաց արաւ ուսումնարաններ, տօններ սահմանեց և Տրդատի օգնութեամբ քրիստոնէութիւնը ծաղկեց ամեն տեղ:

Եւ այսպէս քրիստոնէական կրօնը չայաստանում տարածելուց յետոյ սուրբ Գրիգորը ՅՅI թուին առանձնացաւ Մանիայ այրը, ուր և վախճանեցաւ, որի մարմինը հովուները գտնելով թաղեցին այստեղ: Երկար ժամանակ նորամարմինը մնալով այնտեղ՝ վերջը Քառնիկ անունով մի ճգնաւոր գտաւ և թագեց Թուրդանում, իսկ վերջը տարուեցաւ Վաղարշապատ և ամփոփուեցաւ յանուն ս. Գրիգորի կառուցած (Զուարթնոց) եկեղեցում:

Ս. Գրիգորը կոչում է չայաստանի երկրորդ Լուսաւորիչ, որովհետեւ ս. Թաղէսս և Բարդուղիմէոս նախկին Լուսաւորիչներից յետոյ սա նորոգեց քրիստոնէութիւնը չայաստանում:

Ս. Գրիգոր Լուսաւորչի տօնը երեք անգամ ենք կատարում տարին:

ա. Մեծի պահոց հինգերորդ շաբաթ օրը կատարում ենք շարչարանքի և Խորվիրապը մտնելու տօնը:

բ. Հոգեգալտից յետոյ երկրորդ շաբաթ օրը տօնում ենք Խորվիրապից դուրս գալը:

գ. Երկու շաբաթ անց այդ տօնից տօնում ենք նորա սուրբ Նշխարները գտնելու տօնը:

## ԺԱ.

ՀԹԻՓՍԻՄԵԱՆ ԵՒ ԴԱՅԻԱՆԵԱՆ ՍՈՒՐԲ ԿԱՅՍԵՐ.

Սուրբ Հոփիսիմէ կոյսը, որ թագաւորի տանից էր, իւր ուսումը ստացաւ Հոռովմի մէկ կուսանոցում Գալիանէ մայրապետի մօտ և յայտնի էր ամենքին իւր պարկեցութեամբ, Աստուածապաշտութեամբ և գեղեցկութեամբ:

Դիոկղետիսանոս կայսը շատ հաւանեց Հոփիսիմէին և մայրապետի միջոցով առաջարկեց նորան թագուհի լինել տէրութեան՝ իւր հետ ամուսնանալով: Բայց Հոփիսիմէն իւր ուխտին հաւատարիմ մնալով մերժեց կայսեր առաջարկութիւնը. և այս կոյսերը տեսնելով, որ այնուհետեւ իրանց կեանքը վտանգի մէջ պէտք է լինի, Գալիանէ մայրապետի առաջնորդութեամբ և մի քանի քահանաներով, որոնք մօտ եօթանասուն հոգի էին, գաղտնի փախան Հոռովմից գէտի Երտասաղէմ. Երկրպատգեցին սուրբ տեղերին և ապա չայաստանի զանազան կողմերը մանգալուց յետոյ վերջը իջևանեցին Վարապ սարի վերաց: Այնտեղից սուրբ Հոփիսիմեանք երեսուն և եօթն հոգւով

գնացին Վաղարշապատ քաղաքը և բնակեցան քաղաքից դուրս գտնուած մի հնձանի մէջ, ուր հուլունք պատրաստելով ապօռմ էին:

Երբ որ Թիոկղետիանուը լսեց, թէ Հռիփսիմէն մայրապետի և ուրիշ շատ ընկերների հետ փախել է Հռովմից, իսկոյն խնդրականեր ուղարկեց ամեն կողմ որ գտնեն նորան. հրովարտակ զրեց մեր թագաւոր Տրդատին, որի մէջ զրում էր թէ Հռիփսիմէին կամ ինքը կին վերցնէ և կամ ուղարկէ Հռովմ իւր մօտ: Խոկոյն Տրդատ մարդիկ ուղարկեց որոնելու այդ կոյսերին, որոնք գտնուեցան հընձանի մէջ. Տրդատը այնպէս հաւանեց Հռիփսիմէին, որ ցանկացաւ նորան Հայաստանի թագուհի գարձնել. բայց Հռիփսիմէն մերժեց Տրդատի առաջարկութիւնը, ամենեին չվախենալով նորա սպառնալիքներից, որովհետեւ նա ուխտել էր իւր կեանքը նուիրել Աստծուն մինչեւ մահը: Գալիքանէն էլ յորդորում էր նորան ամեննեին չը փոխել իւր միտքը:


Տրդատը խիստ բարկացաւ Հռիփսիմէի և Գալիքանէի այս վարմունքի վերայ և հրամացեց նահատակել նորան՝ բոլոր ընկերների հետ. դահիճները գնացին և տեղնուտեղը ամենքին էլ կոտորեցին և թողին անթաղ, մինչեւ որ ս. Գրիգոր Լուսաւորիչը Խորվիրապից գուրս եկաւ և ամփոփեց նոցա մարմինները ու նոցա վերայ շինեց մատուռներ:

Սոքա կոչուեցան Հռիփսիմեանք և Գալիքանեանք իրանց դլխաւորների անունով, որոնց տօնը Հայոց եկեղեցին կատարում է ամեն տարի հանդիսավոր Հռիփսիմատեան երկրորդ շաբաթը ս. Լուսաւորչի տօնից առաջ:

ԺԲ.

ՏՕՆ ՄՐԲՈՅ ԿՃՄԻԱԾՆԻ.

Երբ որ սուրբ Գրիգոր Լուսաւորչին Խորվիրապից հանցին՝ Տրդատ թագաւորը, նախարարները և շատ ժողովուրդ հաւաքուեցան նորա չորս կողմը և վաթսուն և հինգ



օր շարունակ հնձանում քարոզեց նոցա Քրիստոսի սուրբ Աւետարանը. տեսաւ մի լուսեղին մարդ, որ իջաւ ներքեւ և որի հետ լոյսը վերելից իշնում էր մինչեւ ներքեւ. Ճեռ-

քին բռնած ունէր մի մեծ ոսկէ մուրճ-ուռն. նա եկաւ հասաւ մինչև լերկիր և ոսկէ ուռով խփեց զետնին քաղաքի մէջ տեղում. այդ ձայնի վերայ թնդաց անդունէքը:

Ահաւոր տեսքով այն մարդը, որ ոսկէ ուռով բաղկեց երկիրը՝ չօր Աստուծոյ Միածին Որդին էր, որ իշաւ երկնքից: Այս տեսիլքը եղաւ 302 թուին: Երբ ս. Գրիգորը տեսիլքը պատմեց Տրդատ թաղաւորին և նախարարներին՝ իսկոյն նոցա և բոլոր ժողովրդի օգնութեամբ Միածնի իշած տեղը շինեց Մայր եկեղեցի, որին անուանեց իշմի ածին:

Սուրբ իշմիածինը նշանաւոր է նորանով, որ ս. Լուսաւորիչը այնտեղ հաստատեց ամենայն չայերի չայրապետական Աթոռը, այնտեղ է օրհնվում սուրբ Միւռօնը, և այնտեղ են ձեռնադրվում և օծում կաթուղիկոսները և եպիսկոպոսները:

Այդ պատճառով ս. իշմիածնայ տօնը մեծ հանդիսով տօնում է չայաստանեայց եկեղեցին: Ս. իշմիածինը ամենայն չայերի սիրտն է, նորա հետ են կապուած բոլոր քրիստոնեայ չայերը, ինչ երկրումն էլ որ բնակուելու լինին, որովհետև մեր ս. Լուսաւորչի հիմնած առաջին եկեղեցին է և այնտեղից է տարածում բոլոր հայերի վերայ Քրիստոսի սուրբ հաւատի լոյսը:

Ս. իշմիածնայ տօնը կատարւում է չոգեգալուստի երկրորդ կիւրակէին:

ԺՊ.

## ՏՕՆ ՎԱՐԱԴԱՅ ՄՐԲՈՅ ԽԱՅԻ:

Երբ որ առաջին դարում Պատրոնիկէ թագուհին գըտաւ Քրիստոսի սուրբ Խաչակայտը՝ Յակովը Տեառն-եղբայրը նորանից մի կտոր տուաւ թագուհուն: Եւ որովհետև Հռիփսիմէ կոյսը նորա ցեղիցն էր՝ այս մասունքը անցած էր նորա ձեռք: Երբ որ Հռիփսիմէն իւր ընկեր-



ներով Հռովմից փախաւ Հայաստան՝ Խաչակայտի այդ մասն էլ հետն ունէր իբրև իրան պահապան: Երբ որ նոքա հասան Վարագ սարը՝ Հռիփսիմէն վախենալով որ այդ Խաչը ընկնի անհաւատների ձեռքը և անարգուի, թաղեց Վարագ լերան զլիկին 300 թուին, այնպէս որ տեղը ոչ ոք չէր իմանում, թէպէտ աւանդութեամբ յայտնի էր, որ կենաց Փայտի կտորը պահուած էր Վարագ լերան վերայ:

Ճատ տարիներ անցնելուց յետոյ այդ լեռան վերայ ճգնաւում էր Թօդիկ անունով մի մարդ. մէկ օր (653 թուին) առաւտեան Թօդիկը և իւր աշակերտ Յօվէլը յանկարծ տեսան մի լոյս կանգնած Վարագ սարի մէկ քարի վերայ և տասերկու լուսեղէն սիւներ նորա շուրջը. յետոյ լուսեղէն նշանը վերացաւ քարից և մտաւ եկեղեցի ու կանգնեց սեղանի վերայ. նոքա մտան եկեղեցին և երկրպագեցին սուրբ Նշանին: Լուսեղէն սիւները տասներկու օր մնացին, մինչև որ հեռաւոր բնակիչները տեսան և հոգեորական ու աշխարհական մեծ բազմութիւնն ժողովուեցան այնտեղ, որոնց հետ և Ներսէս Գ. Ջինող կոչուած կաթուղիկոսը և Թշուունեաց Վարդ նախարարը:

Կաթուղիկոսը ՚ի պատիւ նորագիւտ սուրբ Խաչի սահմանեց Վարագայ խաչի տօն կատարել հոկտեմբեր ամսին և մի շաբաթ պահէք, որ կոչվում է Վանցոց-պահէք:

### ՓՊ.

### ԵՐԵՒԱՆՄՆ ՍՈՒՐԲԻ ԽԱՉԻՆ.

351 թուին Մեծն Կոստանդիանոսի որդի Կոստանդ Վայսեր թագաւորութեան օրեղում մի անգամ մայիսի եօթներորդ օրը առաւտեան Քրիստոսի սուրբ Խաչը խաչաձև ճառագայթներով փայլեց օգի մէջ Գողգոթա սարի գլխին, այնպէս որ նորա լուսաւոր ճառագայթները արեգակի լոյսը փակելով տարածւում էին մինչև Զիթենեաց սարը. այս երեսիթը շարունակուեցաւ մի քանի ժամ և տեսանելի էր Երուաղէմի բոլոր բնակիչներին: Քրիստոնէից բազմութիւնը

փառք էր տալիս Աստծուն, որ այդ սքանչելիքը ցոյց տաւեց անհաւատներին:

Հազարաւոր մարդիկ այս սքանչելիքը տեսնելուց յետոյ քրիստոնէութիւն ընդունեցին և միրատուցան Երուսաղէմի սուրբ Կիւրեղ հայրապետի ձեռքով, ոա Կոստանդ կայսեր գրեց սուրբ Խաչի հրաշալի երևումը և հրէաների ու հեթանոսների մէջ սկսաւ քարոզել և շատերին նոցանից դարձրեց քրիստոնեայ:

Մեր ս. Եկեղեցին մինչև այսօր էլ տօնում է ս. Խաչի երևումը միշտ Ցինանց հինգերորդ կիւրակին:

### ԺԵ.

### ՄԵԾՆ ՆԵՐՍԻՍ.

Մեծ Ներսէս հայրապետը սուրբ Լուսաւորչի թոռան թոռն էր. նորա հօր անունն էր Աթանաղինէ; Ներսէսը իւր ուսումը ստացել էր Կեսարիայում և ճառախում էր Հայոց արքունիքում ինչպէս սենեկապետ և զինակիր թագաւորի և իւր քաղցր բարքով սիրելի էր ամենին: Նա ամուսնանալով մի որդի ունեցաւ Սահակ անունով:

Փառներուն կաթուղիկոսի մահից յետոյ Հայոց նախարարները և մեծամեծները բազմաթիւ ժողովրեան հետ գնացին Արշակ թագաւորի մօտ և խորհուրդ անելով ընտրեցին Ներսէսին ս. Լուսաւորչի Աթոռի գահակալ 364 թուին:

Ներսէսը բարեկարգեց Հայաստան աշխարհը ամենայն կողմից և Արշակ թագաւորի հաւանութեամբ աղքալին ժողով գումարելով Աշտիշատ քաղաքում՝ վերացրեց այն

ժամանակ եղած բոլոր անկարգութիւնները. նա շինեց աղքատանոցներ և հիւանդանոցներ ամեն գաւառների մէջ և ընդհանուր վերատեսուչ կարգեց նոյա համար իւր սարկաւագ լսադին: Ամեն գիւղերում վանքեր և իջևաններ շինեց ճանապարհորդների և հիւրերի համար. ապատանարաններ շինեց ծերերի և կարօտեալների համար. մենաստաններ և գպրոցներ շինեց ամեն տեղ, և յունարէն ու ասորելէն լեզուներով գիտութիւնը և Աստուածպաշտութիւնը տարածուեց ամեն կողմ: Ներսէսի շինած այդպիսի բարեգործական շինութիւնների թիւը երկու հազարից աւելի էր:

Ներսէսը արգելեց հեթանոսական սովորութիւնները, ինչպէս օրինակ՝ մեռելների վերայ անյօյս լաց լինելը, սեւ հագնելը և այլն:

Ներսէսը ման էր գալիս գիւղեր ու քաղաքներ և ամեն տեղ հաւասար կերպով տարածում էր իւր ինսամքը. ամեն օր իւր հետ սեղան էր նստեցնում ոչ թէ միայն նախարարներին ու մեծամեծներին, այլ մանաւանդ աղքատներ, օտարականներ, կաղեր, կողըեր ու հիւանդներ, որոնց վէրքերը շատ անդամ ինքն էր լուանում ու գեղ դնում:

Թագաւորը, նախարարները և եպիսկոպոսները տեսնելով մեծն Ներսէսի այդպիսի երևելի գործերը՝ ժողով կազմեցին Վաղարշապատ քաղաքում և պատուեցին նորան Պատրիարք տիսողոսով և որոշեցին որ Հայոց կաթողիկոսը այլ ևս Կեսարիա չը գնայ օծուելու, այլ օծուի իւր ազգի եպիսկոպոսներից ս. իշմիածնումը, որպիսի կարգը տևում է մինչև այսօր:

Ներսէսը երբ լսեց, թէ Թէոդոս զօրավարը դիմում է Հայաստանը աւերելու, գնաց նորա առաջ և նորա բար-

կութիւնը իջեցրեց. գնաց Կ. Պոլիս Վաղենտիանոս կայսեր բարկութիւնը գագարեցրեց և Հայոց պատանդները ազատելով մեծ պատուով յետ դարձաւ Հայաստան:

Ներսէսը լաւ հասկանալով ազգի միութեան կարեւորութիւնը՝ երբ տեսաւ որ Հայոց Արշակ թագաւորի ու նախարարների մէջ երկպառակութիւն կար՝ յորդորեց նոցա, յանդիմանեց և նախարարներին հաշտեցրեց թագաւորի հետ:

Յետոյ Ներսէս երկրորդ անգամ գնաց Կ. Պոլիս Վաղէս կայսեր բարկութիւնը հանգստացնելու թագաւորի վերաբերութեամբ. և այդ ժամանակ նորանից աքսորուեցաւ մի անմարդաբնակ կղզի, որտեղից ազատուեցաւ Վաղէսի մահից յետոյ և ներկայ գտնուեցաւ Կ. Պոլիսի տիեզերական ժողովին և յետ դարձաւ Հայաստան, բերելով իւր հետ Արշակ թագաւորի որդի Պապին, որ պատանդ էր այնտեղ և թագաւորեցրեց Հայոց վերայ, որպիս զի Պարսից Ճապուհ թագաւորի Հայաստանին բերած թշուառութիւնները վերացնէ: Պարսիկներին հալածեց Հայաստանից. պատերազմի ժամանակ ինքը Նպատ սարի գլխին կանգնած աղօթում էր և այդպիսով յաղթուեցան պարսիկները:

Այսքան նշանաւոր գործեր կատարելուց յետոյ Ներսէսը թունաւորուեցաւ Պապ թագաւորից, որովհետեւ միշտ յանդիմանում էր նորան վատ ընթացքի պատճառով և թաղուեցաւ Թիլն աւանի մայր եկեղեցու մէջ:

ԺԶ.

Ա. ԱՅՀԱԿ ԵՒ ՄԵՍՐՈՎՎ ԹԱՐԴՄԱՆԻ ՀՆԵՐ.

Քրիստոնէութիւնը չայաստանում տարածուելուց սկզբան չորս հարիւր տարի շարունակ մեր եկեղեցիներում ժամասացութիւնը լինում էր ասորերէն ու յունարէն լեզուներով, որովհետև հայերը սեպհական տառեր չունէին, որ մեր լեզուով գրէին եկեղեցական գրքերը. այդ պատճառով եկեղեցու ժամերգութիւնը անհասկանալի էր հայ ժողովրդի մեծ մասին: Այս բանի վերայ շատ էին մտածում մեր ս. Սահակ և Մեսրովվ հայրապետները: Ահա թէ ովքեր էին դոքա և ինչպէս գտան չայոց տառերը:

1. Մեսրովվը, որ Մաշտոց է կոչվում, Տարօն գաւառի չացեկաց գիւղիցն էր. նորա հօր անունն էր Վարդան. նա մանկութեան հասակից սնուեցաւ բարեպաշտութեան մէջ և սովորեց յունարէն, ասորերէն և պարսկերէն լեզուները. և որովհետև այդ լեզուների մէջ շատ վարժ էր՝ առաջ մեծ Ներսէս կաթողիկոսի գրագիրը դարձաւ, իսկ նորա մահից յետոյ կարգուեցաւ հայոց թագաւորների դիւանագպիր:

Քիչ ժամանակից յետոյ թողնելով աշխարհի մեծութիւնները և փառքերը Մեսրովվը քաշուեցաւ Գողթն գաւառի վանքերից մէկը և այնտեղ սկսեց սուրբ կեանք անցկացնել. նա շատ հետևողներ էլ ունեցաւ և շատերը աշակերտեցան նորան: Մեսրովվը իւր քարոզութեան և ուսուցութեան ժամանակ տեսնում էր որ հայերէն տառեր չը լինելու պատճառով ժողովուրդը չէր հասկանում

ասորոց և յունաց լեզուով ժամերգութիւնը, դորա համար էլ խիստ ցանկանում էր հայերէն տառեր հնարել:

Նա թողեց Գողթն գաւառը և եկաւ Վաղարշապատ, ուր իւր խորհուրդը յայտնեց ս. Սահակ կաթողիկոսին և շուտով չայոց Վռամշապուհ թագաւորի ներկայութեամբ մի ժողով կազմեցին, որտեղ երկար մտածեցին թէ ինչ ձեռով կարելի էր օգնել այդ բանին: Վռամշապուհ թագաւորը յայտնեց դոցա, թէ Դանիէլ անունով մէկ Ասորի եպիսկոպոսի մօտ գտնվում են հայ նշանագիրներ: Այդ պատճառով թագաւորի կարգադրութեամբ ուղարկվում է Հաբէլ քահանան Վահրիճ իշխանի հետ Դանիէլի մօտ, ուր մի տարի մնալով Հաբէլը սովորում է այդ նշանագրերը և գալով Վաղարշապատ բաց են անում ուսումնարան. հաւաքում են աշակերտներ և սկսում են սովորեցնել. բայց անյաջող. յետոյ Մեսրովվ անձամբ գնում է այնտեղ և նոյնը սովորում. վերադառնալով ուսուցանում է, բայց դարձեալ անյաջող. այդ է լինում պատճառ, որ նա սկսում է ճանապարհորդել զանազան գիտնական մարդկանց մօտ տառեր գտնելու դիտաւորութեամբ: Նախ գնաց Եղեսիա Պղատոսի մօտ, որը խորհուրդ տուեց նորան դիմել Փիւնիկէ Եպիփանոսին և նորան վախճանած գտնելով գնաց Սամուսատ Հռուփանոսի մօտ:

Վերջը Մեսրովվ մարդկալին հնարապիտութիւնից յուսը կտրած դիմեց աղօթքով Աստծուն. գտաւ տառերը, զրի անցկացրեց և դիմեց Հռուփանոսին այդ տառերը ձեւակերպելու համար, որ և յաջողեցաւ 406 թուին:

Մեսրովվը շտապեց չայաստան, ուր թագաւորի հրամանով իսկոյն ժողովեց մանուկներ. դպրոցներ բաց արաւ և այսպիսով ուսումն ու գիտութիւնը հայերէն տառերով

սկսաւ տարածուել չայաստանի մէջ. թարգմանեց Աստուածաշունչ Սուրբ Գիրքը, բարեկարգեց ծխարանը, որ նորա անունով կոչուեցաւ Մաշտոց:

Վրացիք և Աղուաններն էլ իմանալով այդ՝ խնդրեցին Մեսրովպին, որ իրանց համար էլ տառեր հնարե. Մեսրովպը զնաց նոցա երկիրները և կատարեց նոցա ցանկութիւնը:

Ա. Մեսրովպ Սահակ կաթուղիկոսի մահուանից յետոյ նստաւ կաթուղիկոսական Աթոռը և վեց ամսից յետ վախճանեցաւ ու թագուեցաւ Օշական գիւղում, որ Վաղարշապատից մէկ ժամուայ ճանապարհ հեռու է: Ա. Մեսրովպի գերեզմանի վերայ յետոյ շինուեցաւ եկեղեցի:

2. Ա. Սահակ Հայրապետը Մեծ Ներսիսի որդին էր. քաջ գիտէր յունաց, ասորւոց և պարսից լեզուները, առաքինի ու ազգասէր անձն էր. նա ամուսնալով՝ մի աղջիկ ունեցաւ Սահականոյշ անունով, որ Վարդան Մամիկոնեանի մալրն էր:

Ա. Սահակ իւր կնոջ մահից յետոյ ազդի հաւանութեամբ Հայրապետական գահը բարձրացաւ. և այդ ժամանակ մեծ գործեր կատարեց. կարգ և կանոն հաստատեց, եկեղեցիները պայծառացրեց, շատ եկեղեցիներ և վանքեր նորոգեց, նորոգեց ս. Հռիփսիմեանց վկայարանը: Երբ ս. Մեսրովպ յայտնեց նորան իւր խորհուրդը Հայերէն տառեր գտնելու մասին, նա ամեն կերպով օդնեց թէ տառերը գտնելու և թէ Սուրբ Գրքի թարգմանութեան, իր Հայրապետական իրաւունքով բանալով ուսումնարասներ Հայաստանի ամեն կողմերը:

Եւ այսպէս նա իւր ամբողջ կեանքը նուիրելով ազգի

յառաջադիմութեան և խաղաղութեան և եկեղեցու պայծառութեան գործին՝ ծերութեան հասակում առանձնացաւ Բագրեանդ գաւառի վլուր գիւղը, ուր 440 թուին վախճանեցաւ մօտ իննսուն տարեկան հասակում:

Ա. Սահակի և Մեսրովպի լիշտակը մինչև այսօր էլ մեծ հանդիսով տօնում է մեր եկեղեցին տօն Սրբոց թարգմանչաց անունով:

## ԺԷ.

## Ա. ԱՏՈՎՄԵԱՆՔ.

Պարսից Յաղկերտ թագաւորը հալածում էր քրիստոնեաներին. նա իւր մոգերի ու մոգպետների խոհրդով հրաման հանեց, որ իւր տէրութեան ամեն կողմերը քրիստոնէութիւնը ոչնչացնեն և տարածեն իրանց կրօնը—կրակապաշտութիւնը:

Այդ նպատակով հրաւիրեց Շօրայ դուռը Հայոց զօրքը, որոնց առաջնորդներն էին Ատովմ Գնունի և Մանամիհը Թշտունի նախարարները և խիստ հրամայեց նոցա, որ կրակին երկրպագութիւն տան. այլ և անողորմ տանձանքներով սկսեցին նոցա չարչարել. բայց նոքա լաւ համարեցին մեռնել Քրիստոսի անուան համար քան թէ իրանց կրօնը թողնել. այդ պատճառով վախան Հայաստան:

Երբ որ Յաղկերտը իմացաւ այդ՝ մեծ զօրք ուղարկեց նոցա ետևից և պատուիրեց որ եթէ յետ ըլ գառնան վախստականները՝ սպանեն նոցա: Ատովմ և Մանամիհը նախարարները Անձևացեաց գաւառի լեռների մէջ ամրա-

ցել էին. Պարսից զօրքը այնտեղ վրայ հասնելով նոյաբնեցին և տեղն ու տեղը նահատակեցին:

Դոքա կոչուեցան Ատոմմեանք, որոնց լիշտակը մեր սուրբ եկեղեցին հատարում է բուն բարեկենդանից երկու շաբաթ առաջ:

## ԺԷ.

### Ա. ՎԱՐԴԱՆԱՆՔ.

I. Սուրբ Վարդան Մամիկոնեանը Սահակ Պարթևի թոռն էր: Վարդանը Յունաց Թէոդոս կայսրից ստրատելատութեան պատիւ ստացաւ և պարսիկներից էլ մեծ պարգևներ ստացաւ իւր քաջութիւնների համար և իւր քաջութիւններով և առաքինութեամբ առաջինը եղաւ հայ նախարարների մէջ:

II. Վարդանի ժամանակ Պարսկաստանում թագաւորում էր Յազկերոր: Սա մոգերի մոգակտների և իւր հագարապետ Միհրներսեկի խորհրդով կամեցաւ կրակապաշտութիւն տարածել իւր հպատակ բոլոր քրիստոնեաների մէջ, որոնց թւում, նաև Հայերի մէջ. և այս պատճառով ամեն Հնարք գործ էր գնում այդ նպատակին հասնելու համար:

Այդ ժամանակները Պարսից և չոնաց մէջ պատերազմ կար. մոգերը Յազկերորին խորհուրդ տուին, որ Հայոց իշխաններին և նախարարներին իրանց զօրքով օգնութեան հրաւիրէ և յաղթութիւնից յետոյ ստիպէ նոյա, որ արեգակին երկրպագութիւն տան: Յազկերոր 443 թուին Հրովարտակ ուղարկեց իւր հպատակ քրիստոնեաներին, այն է Հայերին, Վրացիներին, Աղուաններին և ուրիշ աղ-

գերին, որ շտապեն օգնութիւն գալ: Եւ որպէս զի Հայերը ըլ կասկածեն՝ Վասակ նախարարին մարզպանութիւն տուեց, իսկ Վարդանին ընդհանուր սպարապետ կարգեց Հայոց աշխարհին:

Այդ պատերազմի ընթացքում Յազկերոր շարունակ մտածում էր որսալ քրիստոնեակ նախարարներին, իշխաններին և բոլոր մեծամեծներին, երբեմն սիրով, երբեմն



սպառնալիքներով և երբեմն արհամարհելով քրիստոնէութիւնը և կրակապաշտութիւնը գովելով. քրիստոնեաները ՚ի հարկէ զայրանում էին նորա դէմ, բայց ոչինչ չէին կարողանում ասել: Երբ Յազկերոր չոնաց յաղթեց, հրամայեց որ այնուհետև ըսնութեամբ տարածեն կրակապաշտութիւնը և վերջ տան քրիստոնէութեան. իսկ ովքեր որ

կը համարձակէին ընդդիմանալ՝ բանտարկել և մահուան պատիժ տալ և նոցա ունեցած-չունեցածը արքունի սեպ-հականութիւն դարձնել:

Սակայն Յազկերտը այս միջոցներով չկարողացաւ հաս-նել իւր նպատակին, որովհետև Յիսուսի անուան հաւա-տացողները աւելի լաւ էին համարում ամեն տեսակ պա-տիժներ կրել, քան թէ սուրբ Աւետարանի մի խօսքը եղ-ծել: Յետոյ ուղարկեց Հայոց աշխարհը իւր հաւատարիմ ծառաներից մէկին, որի անունը Դենշապուհ էր, որ զա-նազան խստութիւններով սկսաւ նեղել ժողովրդին, որպէս զի գուցէ այդպիսով ստիպուեն իրանց կրօնը ընդունել. սակայն այդպիսով էլ չհասաւ իւր նպատակին:

2. Երբ որ Յազկերտը տեսաւ, որ այս ամենը անելով չէ կարողանում չայերին յազդել, իրեւ վերջին զէնք իւր չար մտադրութիւնը իրագործելու՝ հրամայեց մոգերին և մոգպետներին, որ պարսից կրօնի օրէնքները առանձին հրովարտակով յայտնեն հայերին: Այս թղթի մէջ պա-տուիրում է որ կամ պատասխանեն իւր գրածներին և կամ շուտով ներկայանան իրան:

Հայոց Յավսէփի կաթուղիկոսը եպիսկոպոսների և եշ-խանների հետ ժողով կազմելով Արտաշատ քաղաքում՝ մի առ մի հերքեց պարսից կրօնի օրէնքները, մէջը յայտնե-լով, որ իրանք պատրաստ են իրանց կրօնի համար ամեն տեսակ տանջանք, նեղութիւն և մահ յանձն առնել: Երբ այս պատասխանը կարգացին Յազկերտի առաջ՝ շատերը ծածուկ գտվում էին և զարմանում էին հայերի համար-ձակութեան վերայ: Թագաւորը սաստիկ գայրացած՝ Հայոց մեծամեծներին և նախարարներին կանչեց արքունի դուռը: Քատկի աւագ շաբաթ՝ օրը 450 թուին նոքա հասան

Պարսից թագաւորի գուռը և ներկայացան թագաւորին, որը տեսնելով թէ նոքա չեն ուրանում իրանց հաւատը, շատ բարկացաւ և երեք չորս անգամ կրկնում էր և ա-սում. «Զեզ ամենքիդ էլ, որ այստեղ էք, չարաչար կա-պանքներով դժուարացանելի տեղերով կաքսորեմ Սագաս-տան, այնպէս որ ձեզանից շատերը ճանապարհին շողից կը մեռնեն, մնացածներն էլ կրնկնեն ամուր բերդերի ու ան-ել բանտերի մէջ. Ճեր աշխարհն էլ անթիւ զօրք կու-զարկեմ փղերի հետ, Ճեր կանանցն ու որդոց աքսորել կը տամ խուժաստան, եկեղեցիները, որ վկայարան էք անուանում, կը քանդեմ, կը փլցնեմ ու կ'ոչնչացնեմ. և եթէ մէկը կրնդիմանայ՝ գազանների կոխան լինելով անողորմ կը մեռնի»:

Թագաւորը հրամայեց խիստ հսկողութեան տակ պա-հել նոցա: Մինչդեռ նախարարները տարակուսութեան մէջ էին թագաւորի ծառաներից մէկը, որ ծածուկ քրիս-տոնեայ էր, խորհուրդ տուեց նոցա որ երեսանց կատարեն թագաւորի պատուէրը և այդպիսով թէ իրանց և թէ հայ-բենիքը նեղութիւններից ազատեն: Այս խորհուրդը ընդու-նեցին ամենքը և միաբան Ճեռքերը դրին ս. Աւետարանի վերայ և երգուեցին սուտ և առ ժամանակ ուրացած Ճե-ւանալ հայրենիքի և հաւատի փրկութեան համար: Թա-գաւորը երբ լսեց նախարարների այս վճիռ՝ շատ ուրա-խացաւ և մեծ պարզեներով ու բազմաթիւ զօրքերի և եօթն հարիւրի չափ մողերի հետ յետ դարձրեց նոցա Հա-յաստան, պատուիրելով, որ շուտով վերջացնեն քրիստո-նէութիւնը և կրակապաշտութիւնը հաստատեն:

3. Երբ այս լուրը հասաւ Հայաստան, տակն ու վրայ եղաւ աշխարհը. Հայերը յանդիմանեցին նախարարներին

հաւատուրացութիւնը. այդ միջոցին բանակի մէջ եղած քահանաները գեսպան ուղարկեցին եպիսկոպոսների ժողովին և յայտնեցին ամեն բան. խոկոյն ամեն կողմերից բազմաթիւ կամաւոր զօրքեր հաւաքուեցան վաթսուն հազարի չափ, Քրիստոսի սուրբ հաւատը պաշտպանելու համար: Ուխտեցին որ եղբայրը եղբօր, հայրը որդուն, որդին հօրը, կինը ամուսնուն և ծառան տիրոջը ըր խնայի և Աստուծոյ օրէնքը թագաւորէ ամենի սրտում: Այս ուխտը հաստատելուց յետոյ ամենքը զինուած պատրաստ էին, երբ պարսից և առ երեսս ուրացած չայոց խումբը մոզերի հետ հասաւ ծաղկոտն գաւառի Անդր զիւղաքաղաքը և այնտեղ բանակ դրին. և մոգաքեր ուզում էր եկեղեցու զբաները քանդել. ժողովուրդը Հեռնդ երէցի առաջնորդութեամբ յարձակուեցան մոզերի ու մոգաքետների վերայ և ջարդ տալով փախցրին նոցա: Մոգաքետը տեսնելով չայոց հաւատի հաստատութիւնը՝ համոզուեցաւ որ անհնար է մոգութիւնը տարածել նոցա մէջ, խորհրդակցեց Վասակի հետ, որի խորհրդով և զանազան խորամանկ միջոցներով կրակապաշտութիւնը սկսաւ բուն դնել մի քանի տեղերում: Վասակը զաղտնի մոգական կրօնն էր պաշտում, խոկ յայտնի խաբում էր չայերին, որ Յազկերտից աւելի եւր չար խորհրդակիցներով մեծ վնաս հասցրեց չայաստանին:

Երբ Վարդան Մամիկոնեանը տեսաւ Վասակի ուրացութիւնը՝ Ազդի մեծամեծների հետ ժողով կաղմեցին Հահապիվան քաղաքում, ուր բոլորն էլ միարեան ուխտեցին հաւատարիմ մնալ Քրիստոսի հաւատին և ձեռքերը սուրբ Աւետարանի վերայ դնելով և համբուրելով Այն, որոշեցին պատերազմել հաւատի համար:

Մի քանի ժամանակից յետոյ Յազկերտը Միհրներսէն Հազարամպետին մեծ զօրքով և բազմաթիւ վղերի հետ ուղարկում է չայաստան:

Զատիկի տօնի օրերին չայերը լսեցին Պարսից այս պատրաստութիւնները և ամենքին սարսափը տիրեց. առանց ժամանակ կորցնելու խոկոյն բոլոր նախարարները վաթսուն և վեց հազար զօրքերով հաւաքուեցան Արտաշատ. և որովհետեւ թշնամիները բանակ էին դրել Արտազ գաւառի Աւարայր դաշտի մէջ Տղմուտ գետի ափին, այդ պատճառով չայոց զօրախումբն էլ բանակեցաւ այնտեղ:

Վարդանը զօրքը կազդի գնելուց յետոյ՝ խրախուսեց և քաջալերեց նախարարներին և զօրքերին. որից յետոյ պատերազմի նախընթաց երեկոյին Վեռոնդ երէցը մի ազդու ճառով զինեց ամենքին աներկիւղ պատերազմելու. այդ զիշերը նոքա, ովքեր մկրտուած չէին՝ մկրտուեցան. սեղան կազմուեցաւ, կատարուեցաւ և. Պատարագի խորհուրդը և Հոգեգալստեան եօթներորդ օրը ամենքը հաղորդուեցան և այդպիսով պատրաստուեցան հաւատի պատերազմին:

451 թուին յունիսի 2-ին սկսուեցաւ պատերազմը. յաղթութիւնը չայոց կողմն էր. քաջ Վարդանը առիւծի նման աջ ու ձախ զլորում էր պարսիկներին. բայց յանկարծ մի քանի հարուած ստանալով նահատակուեցաւ և երեկոյեան դէմ վերջացաւ պատերազմը: Հայերի կողմից ընկան 1036 հոգի, խոկ Պարսից կողմից ընկան 3544 հոգի:

Վարդանանց քաջ նահատակների գլխաւորներն էին՝ Քաջ Վարդանը, կորովի Խորէնը, արի Արտակը, զարմանալի Տաճատը, իմաստուն Հմայեակը, հրաշակերտ Ներսե-

Հը, մանուկ Վահանը, արդար Արսէնը, և յառաջադէմ  
Գարեգինը:

Պատերազմից յետոյ Հայերը ամրացան բերդերը. թէ-  
պէտ պարսիկների կողմից էլի փորձեր եղան Հայերի մէջ  
կրակապաշտութիւն տարածելու, բայց անօգուտ անցան.  
վերջ՝ ի վերջոյ Հայերը ազատութեամբ սկսան պաշտել  
իրանց կրօնը:

Պասակը իւր գործած չարութիւնների պատիժը  
ստացաւ. նորան մատնեցին զանազան պատիժների և վեր-  
ջապէս բանտում որդնալից մեռաւ:

Սուրբ Վարդանանց տօնը Հայոց եկեղեցին կատա-  
տարում է միշտ բուն բարեկենդանի հինգշաբթի օրը:





280

280

2013



ՀՀ Ազգային գրադարան



NL0151305

